

13 հուլիսի 2021թ.

Թիվ 01/1 - 177

Հաշվետվություն 03

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահ
Մարտին Գալստյանին

Հարգելի պարոն Գալստյան,

Համաձայն «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» ՀՀ
Կենտրոնական բանկի Կանոնակարգ 4/04 գլուխ 23-ի, կից ներկայացնում ենք էական
փաստերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Առդիր՝ 3 թերթ

Հարգանքով՝

Գլխավոր գործադիր տնօրեն



Հակոբ Անդրեասյան

Սույնով տեղեկացնում ենք, որ 2021թ.-ի մայիսի 13-ին «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ Գործադիր մարմնի կողմից հաստատված AMACBAB26ER9 թողարկման դոլարային պարտատոմսերի և AMACBAB27ER7 թողարկման դրամային պարտատոմսերի վերջնական պայմանների 2.1. կետում արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը սխալմամբ մուտքագրվել է 01 դեկտեմբեր 2021թ.՝ **01 հունիս 2021թ.-ի** փոխարեն:

Այսպիսով հավաստում ենք, որ վերոնշյալ պարտատոմսերի դեպքում՝ որպես արժեկտրոնի հաշվարկման առաջին օր, հիմք է ընդունվում **01 հունիսի 2021թ.:**

Տեղեկացնում ենք, որ սույն թվականի հուլիսի 9-ին «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ-ն դիմել է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ, Բանկի՝ AMACBAB26ER9 թողարկման, դոլարային պարտատոմսերը Հայաստանի ֆոնդային բորսայի պարտատոմսերի երկրորդային շուկայի Bbond հարթակում ցուցակելու նպատակով:

Տեղեկացնում ենք, որ 2021թ. հուլիսի 12-ին «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ-ն ամբողջությամբ մարել է 2018թ.-ի հուլիսի 12-ին թողարկված **AMACBAB23ER6** թողարկման կորպորատիվ դոլարային պարտատոմսերը: Ինչպես նաև վերոնշյալ պարտատոմսերի գծով կատարվել է վերջին՝ վեցերորդ արժեկտրոնի վճարում՝ անվանական արժեքի 2.625% չափով:

Հարկ է նշել նաև, որ շրջանառության ժամկետը լրանալու և մարվելու հիմքով, վերոնշյալ պարտատոմսերն ապացուցակվել են նաև Հայաստանի ֆոնդային բորսաի Abond ցուցակից:

Ընդհանուր մարված պարտատոմսերի անվանական արժեքը կազմել է 2,754,700 ՀՀ դրամ: